ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 628

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*02 նոյեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ՀԱՄԼԵՏ ԹԱՄԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ II ՆՐԲ. ԹԻՎ 27Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով անհրաժեշտությունից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Քաղ. Համլետ Թամամյանին պատկանող, Դիլիջանի Մյասնիկյան փողոցի II նրբ. թիվ 27ա հասցեի բնակելի տանը և 335.0քմ տնամերձ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Ուսանողական փողոց թիվ 27/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 629

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*03 նոյեմբեր 2011թ.*

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի վարչական տարածքում գործող Վազգեն Ֆրանգուլյան անհատական ձեռնարկությունը հայտ է ներկայացրել քաղաքապետարան՝ իր սեփական ձեռնարկատիրական օբյեկտում ոգելից խմիչքներ և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի գ) ենթակետի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Բավարարել հայտը և տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն.
-Վազգեն Ֆրանգուլյան ԱՁ 01.10.2011թ.-31.12.2011թ. ժամանակահատվածի համար
2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին՝ տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար, ըստ Դիլիջանի համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշմամբ հաստատված դրույքաչափերի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 631

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*04 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 2132.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ ԵՎ 1676.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿՐԿՆԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հոկտեմբերի 21-ի թիվ 613 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 2132.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը աճուրդի և-1676.0քմ մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի ներկայացնելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը: Վերջիններս հաստատվեցին համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 229 որոշմամբ՝ հետևյալ աճուրդային լոտ-երով և մեկնարկային գներով.

1. Լոտ 41/ՔՀ-11/ - Օրջոնիկիձե փողոց IV նրբ. թիվ 92, 1500.0քմ, ծածկագիրը՝ 295-008, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 3750000 դրամ,
2. Լոտ 42/ՔՀ-11/ - Սարալանջի փողոց թիվ 34, 632.0քմ, ծածկագիրը՝ 053-293, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1580000 դրամ,
3. Լոտ 9/ՔՀ-10/ կրկնաճուրդ - Սարալանջի փողոց թիվ 30, 801.0քմ, ծածկագիրը՝ 053-206, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 2002500 դրամ,
4. Լոտ 10/ՔՀ-10/ կրկնաճուրդ - Սարալանջի փողոց թիվ 32, 875.0քմ, ծածկագիրը՝ 053-207, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 2187500 դրամ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 630

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85, Ֆաքս (+374 268) 2-33-62

*04 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՓՈՂՈՑԻ I ՆՐԲ. ԹԻՎ 16 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին են դիմել քաղաքացիներ Սիրարփի Ասատրյանը, Կորյուն և Կարեն Ասատրյանները՝ Դիլիջան քաղաքի Այգեստան փողոցի I նրբ. թիվ 16 հասցեի, իրենց սեփականությունը հանդիսացող 1000.0քմ հողամասի ճշտված գլխավոր հատակագիծը տրամադրելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան քաղաքի Այգեստան փողոցի I նրբ. թիվ 16 հասցեի 1000.0քմ մակերեսով, 017-037 ծածկագրով հողամասի գլխավոր հատակագիծը կազմվել է համայնքի կադաստրային քարտեզի հիման վրա, որտեղ առկա են եղել որոշ անճշտություններ: Սեփականատերերի պահանջով կատարվել է տարածքի ճշգրիտ գեոդեզիական հանութագրում, որի համաձայն կազմվել է հողամասի ճշտված գլխավոր հատակագիծ: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին հաստատել վերոգրյալ հողամասի ճշտված գլխավոր հատակագիծը /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2007թ. հոկտեմբերի 4-ի թիվ 202 որոշման կից տրամադրված հողամասի գլխավոր հատակագիծը համարել անվավեր:
2. Հաստատել Դիլիջան քաղաքի Այգեստան փողոցի I նրբ. թիվ 16 հասցեի 1000.0քմ մակերեսով, 017-037 ծածկագրով հողամասի ճշտված գլխավոր հատակագիծը:
3. Պարտավորեցնել սեփականատերերին.
Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն վերագրանցելու նպատակով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 և 68 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2011 թվականի նոյեմբերի 5-ից հայտարարել Օրջոնիկիձե փողոց IV նրբ. թիվ 92, Սարալանջի փողոց թիվ 34, Սարալանջի փողոց թիվ 30 և Սարալանջի փողոց թիվ 32 հասցեների հողամասերի աճուրդ /կրկնաճուրդ/:
2. Աճուրդի /կրկնաճուրդի/ օր նշանակել 2011 թվականի դեկտեմբերի 6-ը:
3. Քաղաքապետարանի հողամասերի աճուրդային հանձնաժողովին հանձնարարել.
1) սահմանել աճուրդի /կրկնաճուրդի/ պայմանները,
2) հողամասի աճուրդային փաթեթում ներառել նախատեսվող շինարարության համար «Ճարտարապետահատակագծային առաջադրանքները»,
3) նախատեսվող աճուրդի /կրկնաճուրդի/ վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 632

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*04 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7/8 ՀԱՍՑԵԻ 137.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հոկտեմբերի 21-ի թիվ 612 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել համայնքի «Բնակավայրերի հողերից» 137.0քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացնելու և մեկնարկային գինը սահմանելու մասին հարցը: Վերջինս հաստատվեց համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 228 որոշմամբ՝ հետևյալ մրցութային լոտով և պայմաններով.
1. Լոտ 4 /ՔԿ-11/ - Մաքսիմ Գորկու փողոց թիվ 7/8, 137.0քմ, ծածկագիրը՝ 131-002, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 40 տարի, հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը՝ 13700 դրամ:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սույն թվականի նոյեմբերի 5-ից հայտարարել Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 7/8 հասցեի 137.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի մրցույթ:
2. Մրցույթի օր նշանակել 2011 թվականի դեկտեմբերի 5-ը:
3. Քաղաքապետարանի հողամասերի մրցութային հանձնաժողովին հանձնարարել.

1) սահմանել կառուցապատման իրավունքի մրցույթի պայմանները,
2) հողամասի մրցութային փաթեթում ներառել նախատեսվող շինարարության համար «Ճարտարապետահատակագծային առաջադրանքը»,
3) նախատեսվող մրցույթի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 633

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*08 նոյեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ՄՈՒՇԵՂ ՍԱՀԱԲԱԼՅԱՆԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ, ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 3550.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Մուշեղ Սահաբալյանը՝ իրեն վարձակալության իրավունքով տրամադրված, Դիլիջանի Կալինինի փողոցի նախկին 3-րդ դպրոցի քանդված շենքի զբաղեցրած 3550.0քմ հողամասին հասցե տրամադրելու խնդրանքով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Մուշեղ Սահաբալյանին վարձակալության իրավունքով տրամադրված Կալինինի փողոցին հարակից տարածքում գտնվող 3550.0քմ հողամասին տրամադրել հասցե՝ Կալինինի փողոց թիվ 101:
2. Պարտավորեցնել քաղ. Մուշեղ Սահաբալյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 634

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*08 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 323-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ /840.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ/ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 323-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 840.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 323-004: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է Բնակավայրերի հողերի կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 323-004 ծածկագրով, 840.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Կամոյի փողոց թիվ 1/5:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի

կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 323-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 323-004 նոր ծածկագրով՝ 840.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 635

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*08 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 324-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ /780.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ/ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 324-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 780.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 324-008: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է Բնակավայրերի հողերի կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 324-008 ծածկագրով, 780.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Կամոյի փողոց թիվ 1/4:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 324-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 324-008 նոր ծածկագրով՝ 780.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 636

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*08 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 287-001 ԵՎ 287-003 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 287-001 և 287-003 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 46.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 287-016 /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է Բնակավայրերի հողերի "այլ հողերի" կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 287-016 ծածկագրով, 46.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Օրջոնիկիձե փողոց V նրբ. թիվ 4/3:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 287-001 և 287-003 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 287-017 նոր ծածկագրով, 46.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 637

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*09 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 053-145 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ /843.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ/ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և հողային հաշվեկշռի կազմման նպատակով, Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 053-145 ծածկագրով հողամասի մի մասի՝ 843.0 քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/ և տալ նոր ծածկագիր՝ 053-400: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման: Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի թիվ 901-Ն որոշմամբ, նշված հողամասը համայնքի «Գյուղատնտեսական նշանակության հողերի» կատեգորիայից փոխադրվել է «Բնակավայրերի հողերի» կատեգորիա: Դիլիջանի գլխավոր հատակագծով վերջինս ընդգրկված է բնակելի կառուցապատման գոտում:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 053-400 ծածկագրով, 843.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Սարալանջի փողոց

VI նրբ. թիվ 3/1:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի հողերի կադաստրային քարտեզի 053-145 ծածկագրով հողամասի մի մասի՝ 053-400 նոր ծածկագրով, 843.0քմ մակերեսով հողամասի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/ նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 638

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*09 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 053-145 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ /681.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ/ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և հողային հաշվեկշռի կազմման նպատակով, Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված 053-145 ծածկագրով հողամասի մի մասի՝ 681.0 քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/ և տալ նոր ծածկագիր՝ 053-401: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման: Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի թիվ 901-Ն որոշմամբ, նշված հողամասը համայնքի «Գյուղատնտեսական նշանակության հողերի» կատեգորիայից փոխադրվել է «Բնակավայրերի հողերի» կատեգորիա: Դիլիջանի գլխավոր հատակագծով վերջինս ընդգրկված է բնակելի կառուցապատման գոտում:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 053-401 ծածկագրով, 681.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Սարալանջի փողոց VI նրբ. թիվ 3/2:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի հողերի կադաստրային քարտեզի 053-145 ծածկագրով հողամասի մի մասի՝ 053-401 նոր ծածկագրով, 681.0քմ մակերեսով հողամասի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/ նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ`
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

«09» 11 2011թ.

# ՀՈՂԱՄԱՍԻ
# ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

տրամադրված է Դիլիջանի համայնքին ին համայնքի ղեկավարի «09» նոյեմբերի 2011թ. N 638 որոշմամբ
(հողամաս տրամադրողը)

Հողամասի իրադրական հատակագիծ
Մ 1 : 10000




Հողամասի հատակագիծ
Մ 1 : 1000




Ծանոթություն`
*գծային չափերը նշված են ուղիղ գծով*

| Գտնվելու վայրը /հասցեն/ | Սարալանջի VI նրբ. 3/2 | անկյան բեկման կետ | կոորդինատներ Y | կոորդինատներ X | Գծային չափեր | Սահմանակից հողօգտագործողներ |
|---|---|---|---|---|---|---|
| Ծածկագիր | 053 - 401 | 1 - 2 | 8486258.7502<br>8486280.6425 | 4512322.0984<br>4512338.7410 | 27.5 | Սարալանջի VI նրբ. 3 |
| Հատկացման նպատակը | Բնակելի տան կառուցման | 2 - 3 | 8486280.6425<br>8486295.6637 | 4512338.7410<br>4512321.9725 | 22.5 | համայնքային հող |
| Նպատակային նշանակությունը /կատեգորիան/ | Բնակավայրերի հող | 3 - 4 | 8486295.6637<br>8486276.7219 | 4512321.9725<br>4512302.0379 | 27.5 | համայնքային հող |
| | | 4 - 1 | 8486276.7219<br>8486258.7502 | 4512302.0379<br>4512322.0984 | 26.9 | Սարալանջի VI նրբ. |
| Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | Բնակելի կառուցապատման գոտի | | | | | |
| Մակերեսը /հա,քմ/ | 681.0 քմ | | | | | |

Հողամասը ծանրաբեռնված չէ

Հողամասը տեղում նշահարված է

Համաձայնեցված է ինժեներական սպասարկում իրականացնող մարմինների հետ /օրենսդրությամբ սահմանված դեպքերում` մարզպետի և այլ լիազոր մարմինների հետ/

| կատարողներ | ստորագրություն | անուն, ազգանուն |
|---|---|---|
| Քաղաքաշին. և հողօգտագ. բաժնի վարիչ | | Լ. Գանիեյան |
| Կատարող | | Ս. Ամյան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 639

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*10 նոյեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՎԱՍԻԼԵՎ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 48 ԵՎ ԹԻՎ 48/2 ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՃՇՏՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան քաղաքի Վասիլև փողոցի թիվ 48 հասցեի 800.0քմ /ծածկագիր` 369-024/ և Վասիլև փողոցի թիվ 48/2 հասցեի 100.0քմ /ծածկագիր` 369-024/ հողամասերի գլխավոր հատակագծերը կազմվել են համայքնի կադաստրային քարտեզի հիման վրա, որտեղ առկա են եղել որոշ անճշտություններ: Հողամասերի սեփականատերերի պահանջով կատարվել է ընդհանուր տարածքի ճշգրիտ գեոդեզիական հանութագրում, որի համաձայն Դիլիջանի քաղաքապետարանի կողմից կազմվել են հողամասերի ճշտված գլխավոր հատակագծերը: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին հաստատել վերը նշված հողամասերի ճշտված գլխավոր հատակագծերը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով`

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջան քաղաքի Վասիլև փողոցի թիվ 48 հասցեի 800.0քմ /ծածկագիր` 369-024/ և Վասիլև փողոցի թիվ 48/2 հասցեի 100.0քմ /ծածկագիր` 369-024/ հողամասերի ճշտված գլխավոր հատակագծերը:
2. Պարտավորեցնել սեփականատերերին.
Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում` նշված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն վերագրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 640

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*10 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ I ՆՐԲ. ԹԻՎ 12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Սոս Օնիկի Հովսեփյանը՝ Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի I նրբ. թիվ 12 հասցեի բնակելի տան իրեն պատկանող մասին նոր հասցե տրամադրելու խնդրանքով:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի I նրբ. թիվ 12 հասցեի բնակելի տան՝ քաղ. Սոս Օնիկի Հովսեփյանին պատկանող մասին /համաձայն 2011թ. հոկտեմբերի 28-ին տրված թիվ 2851247 սեփականության վկայականի/ տրամադրել նոր հասցե՝ Օրջոնիկիձե փողոցի I նրբ. թիվ 12/1:
2. Պարտավորեցնել քաղ. Սոս Հովսեփյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 641

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 նոյեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 324-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ /120.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ/ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 324-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 120.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 324-007: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է Բնակավայրերի հողերի կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 324-007 ծածկագրով, 120.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Կամոյի փողոց թիվ 1/3:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 324-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 324-007 նոր ծածկագրով՝ 120.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 642

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 նոյեմբեր 2011թ.*

## ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 1988թ. հուլիսի 26-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և 2011թ. նոյեմբերի 4-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Գայի փողոցի թիվ 6 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկտմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Սյոմա Հարությունյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի մակերեսը 962.0քմ է: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված տնամերձ հողամասի փաստացի չափը կազմում է 940.0քմ: Չափի փոփոխման հարցում սեփականատերը առարկություն չունի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Գայի փողոցի թիվ 6 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ 940.0քմ մակերեսով, քաղ. Սյոմա Հարությունյանի սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել քաղ. Ս.Հարությունյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 643

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ I ՆՐԲ. ԹԻՎ 12 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. հոկտեմբերի 7-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Կալինինի փողոցի I նրբ. թիվ 12 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Վոլոդյա Աղամի Ավետիսյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով: Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 600.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 1445.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 1145.0քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Կալինինի փողոցի I նրբ. թիվ 12 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 900.0քմ: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային

օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Կալինինի փողոցի I նրբ. թիվ 12 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 900.0քմ մակերեսով, քաղ. Վոլոդյա Արամի Ավետիսյանի /ծնված՝ 10.12.1935թ./ սեփականության իրավունքով:

2. Կալինինի փողոցի I նրբ. թիվ 12 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 1145.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:

3. Պարտավորեցնել քաղ. Վոլոդյա Ավետիսյանին.

1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:

2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 644

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑԻ 1 ՆՐԲ. ԹԻՎ 11 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի քաղխորհրդի գործկոմի 1989թ. օգոստոսի 11-ի թիվ 11 որոշմամբ, անհատական բնակելի տան կառուցման նպատակով, Անդրանիկի թաղամասից /ներկայիս Անդրանիկի փողոց 1 նրբ. թիվ 11 հասցեում/ հատկացվել է 600.0քմ հողամաս քաղ. Կոլյա Թերեզյանին: Դիլիջանի քաղխորհրդի գործկոմի 1990թ. փետրվարի 16-ի թիվ 2 որոշմամբ նույն քաղաքացուն թույլատրվել է նշված հողամասում կառուցելու բնակելի տուն: Առկա է նաև հողի առհավետ օգտագործման պայմանագիրը հաստատված 1989թ. դեկտեմբերի 5-ին պետ. նոտարական գրասենյակի Դիլիջանի նոտարի N 3-232 սեղանամատյանում:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ բնակելի տան շինարարական աշխատանքների ավարտվածության աստիճանը կազմում է մինչև 50%: Հանձնաժողովը նշում է, որ նշված 600.0քմ հողամասը երբևէ ետ չի վերցվել քաղաքապետարանի տնօրինության տակ, մինչ օրս տիրապետվում է քաղ. Կոլյա Թերեզյանի կողմից:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1991թ. մարտի 13-ի թիվ 209 որոշման պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Վերականգնել Դիլիջանի Անդրանիկի թաղամասի Անդրանիկի փողոցի 1 նրբ. թիվ 11 հասցեի բնակելի տան 600.0քմ տնամերձ հողամասի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/ հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ քաղ. Կոլյա Թերեզյանի սեփականության իրավունքով:
2. Պարտավորեցնել քաղ. Կոլյա Թերեզյանին.
1) Նշված հողամասի սահմանները համապատասխանեցնել քաղաքապետարանի կողմից հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ վերոգրյալ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 645

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 217-045 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 217-045 ծածկագրով հողամասի մի մասի՝ 100.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 217-068 : Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է Բնակավայրերի հողերի կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 217-068 ծածկագրով, 100.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Շահումյան փողոց թիվ 27:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 217-045 ծածկագրով հողամասի մի մասի՝ 217-068 նոր ծածկագրով, 100.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 646

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*11 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԻՎԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 27/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Հրաչիկ Ավետիսյանը՝ Իվանովի փողոցի թիվ 27ա հասցեի իր սեփականությունը հանդիսացող տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 670.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 1553.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 1253.0քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Իվանովի փողոցի թիվ 27ա հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 970.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Վերականգնել Դիլիջանի Իվանովի փողոցի թիվ 27ա հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 970.0քմ մակերեսով, քաղ. Հրաչիկ Գուրգենի Ավետիսյանի /ծնված՝ 16.02.1950թ./ սեփականության իրավունքով:
2. Իվանովի փողոցի թիվ 27ա հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 1253.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
3. Իվանովի փողոցի թիվ 27ա հասցեի 970.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Իվանովի փողոց թիվ 27/1:
4. Պարտավորեցնել քաղ. Հրաչիկ Ավետիսյանին.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 647

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*14 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 323-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ /1040.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ/ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 323-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 1040.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 323-005: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է Բնակավայրերի հողերի կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 323-005 ծածկագրով, 1040.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Կամոյի փողոց թիվ 1/6:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 323-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 323-005 նոր ծածկագրով՝ 1040.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 648

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*14 նոյեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ՎՈԼՈԴՅԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ I ՆՐԲ. ԹԻՎ 12/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Վոլոդյա Ավետիսյանը՝ Կալինինի փողոցի I նրբ. թիվ 12 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում իր կողմից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով: Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Կալինինի փողոցի I նրբ. թիվ 12 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում քաղ. Վոլոդյա Ավետիսյանի կողմից կառուցվել է բնակելի տուն դեռևս 1970-ական թվականներին, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 1689.0քմ հողամաս, որից 400.0քմ-ի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով, մնացած 1289.0քմ հողամասը համայնքային սեփականություն է /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Վոլոդյա Ավետիսյանի կողմից, Կալինինի փողոցի I նրբ. թիվ 12 հասցեի տնամերձ հողամասին հարակից տարածքում կառուցված բնակելի տանը և 400.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կալինինի փողոց I նրբ. թիվ 12/1:
2. Կալինինի փողոց I նրբ. թիվ 12/1 հասցեի բնակելի տունը և 400.0քմ հողամասը համարել քաղ. Վոլոդյա Ադամի Ավետիսյանի /ծնված 10.12.1935թ./ սեփականությունը:
3. Վերը նշված 1289.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հողեր», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
4. Պարտավորեցնել քաղ. Վոլոդյա Ավետիսյանին.
1) Նշված տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 649

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*14 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 687-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 687-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 584.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 687-015 /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» այլ հողերի կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 687-015 ծածկագրով, 584.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Թբիլիսյան խճուղի թիվ 34:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 687-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 687-015 նոր ծածկագրով, 584.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 650

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*14 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 053-006 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 053-006 ծածկագրով հողամասի մի մասի՝ 21.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 053-402 /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է "«նակավայրերի հողերի» այլ հողերի կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 053-402 ծածկագրով, 21.9քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Այգեստան փողոց թիվ 17/2:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 053-006 ծածկագրով հողամասի մի մասի՝ 053-402 նոր ծածկագրով, 21.9քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու պատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 651

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 183/8 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂ. ՆԱԻՐԱ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հոկտեմբերի 26-ի թիվ 183 որոշմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Կալինինի փողոցի թիվ 183/8 հասցեի 24.0քմ հողամասում քաղ. Նաիրա Ասատրյանի կողմից ինքնակամ կառուցված շինության, մասնավորապես, 24.0քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը /սեփ. վկայական՝ թիվ 2851271, տրված 04.11.2011թ./՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի և «Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2005թ. հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 17-ի թիվ 731-Ն որոշման: Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ վերոհիշյալ շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին և սպասարկող հողամասը չի մտնում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի կազմում: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Կալինինի փողոցի թիվ 183/8 հասցեի ավտոտնակի օրինականացման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականություն հանդիսացող Կալինինի փողոցի թիվ 183/8 հասցեի 24.0քմ հողամասում քաղ. Նաիրա Աստրյանի կողմից ինքնակամ կառուցված 24.0քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվարկված է արտաքին չափերով/:
2. Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունը իրականացրած քաղ. Նաիրա Աստրյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված գներով, նշված հողամասի և ինքնակամ շինության ձեռք բերման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 652

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 13/5 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հոկտեմբերի 5-ի թիվ 584 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Շահումյան փողոցի թիվ 13/5 հասցեի 26.0քմ հողամասում, քաղ. Սամվել Սերգեյի Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 26.0քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ավագանին 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 220 որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ. Սամվել Գրիգորյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Շահումյան փողոցի թիվ 13/5 հասցեի 26.0քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 26.0քմ մակերեսով ավտոտնակը օտարել քաղ. Սամվել Գրիգորյանին, հետևյալ արժեքներով.
- ավտոտնակ՝ 26.0 քմ – 33800 դրամ,
- հողամաս՝ 26.0 քմ - 32292 դրամ:

2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Սամվել Գրիգորյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 32292 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 33800 դրամ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 653

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 67/2 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ԼԻԼԻԹ ԽԱՆԲԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հոկտեմբերի 18-ի թիվ 602 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/2 հասցեի 24.0քմ հողամասում, քաղ. Լիլիթ Խանբեկյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 24.0քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ավագանին 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 219 որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ. Լիլիթ Խանբեկյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/2 հասցեի 24.0քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 24.0քմ մակերեսով ավտոտնակը օտարել քաղ. Լիլիթ Խանբեկյանին, հետևյալ արժեքներով.
- ավտոտնակ՝ 24.0 քմ – 31200 դրամ,
- հողամաս՝ 24.0 քմ - 29808 դրամ:

2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Պարտավորեցնել քաղ. Լիլիթ Խանբեկյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 29808 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 31200 դրամ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 654

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵԻ 100.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի տվյալների համաձայն՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2754442, տրված 19.02.2010թ., Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 7 հասցեի բնակելի տունը 1100.0քմ տնամերձ հողամասով պատկանում է քաղ. Մելինե Գյոզչյանին: Վերջինս դիմել է քաղաքապետարան՝ նշված բնակելի տան տնամերձ հողամասին կից, Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 7/1 հասցեի 100.0քմ հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը, այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, նշված բնակելի տան սեփականատեր Մելինե Գյոզչյանին: Վերոգրյալ 100.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման իններորդ գոտում: Նշված 100.0քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված է և տրված է սեփականության վկայական թիվ 2848441, տրված 29.09.2011թ.: Համայնքի ավագանին 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 221 որոշմամբ համաձայնություն է տվել նշված 100.0քմ հողամասն ընդլայնման կարգով քաղ. Մելինե Գյոզչյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշման 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66

հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 7 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասին կից գտնվող, Մաքսիմ Գորկու փողոցի 7/1 հասցեի 100.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով /ընդլայնման կարգով/ օտարել քաղ. Մելինե Գյոզչյանին: Հողամասի արժեքը կազմում է 191400 դրամ:
2. Քաղաքացու հետ կնքել հողի առքուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Մելինե Գյոզչյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողամասի կադաստրային արժեքը՝ 191400 դրամ, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 655

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Սուրեն Պոռշիկյանը, իր ընտանիքի կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով: Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի նիստում և թիվ 223 որոշմամբ բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով`

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Այգեստան փողոցի թիվ 2Բ շենքի թիվ 1, մեկ սենյականոց` 46.1 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով, 69150դրամ արժեքով, օտարել Սուրեն Ժորայի Պոռշիկյանին, կնոջը` Նունե Սարիբեկյանին, տղային` Սնակ Սուրենի Պոռշիկյանին, աղջկանը` Միրարփի Սուրենի Պոռշիկյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 656

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Շաքար Մանուչարյանը, իր ընտանիքի կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով: Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի նիստում և թիվ 226 որոշմամբ բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գետափնյա փողոցի թիվ 76 շենքի թիվ 17, երեք սենյականոց՝ 65.3 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով, 97950դրամ արժեքով, օտարել Շաքար Վահանի Մանուչարյանին, կնոջը՝ Սիրուշ Վիրաբյանին, տղային՝ Մերուժան Շաքարի Մանուչարյանին, տղային՝ Վահան Մանուչարյանին, հարսին՝ Սուսաննա Բաբայանին, հարսին՝ Նունուֆար Սահակյանին, թոռանը՝ Նշան Մերուժանի Մանուչարյանին, թոռանը՝ Էդվարդ Մերուժանի Մանուչարյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 657

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

### ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Գրիգոր Ճաղարյանը, իր ընտանիքի կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով: Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի նիստում և թիվ 225 որոշմամբ բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գայի փողոցի թիվ 78 շենքի թիվ 36, երեք սենյականոց՝ 86.4 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով, 129600դրամ արժեքով, օտարել Գրիգոր Ճաղարյանին, կնոջը՝ Անգին Թամրազյանին, տղային՝ Գևորգ Գրիգորի Ճաղարյանին, եղբոր կնոջը՝ Ալվարդ Հակոբյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 658

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Հրանտ Սուրենի Դավթյանը, իր ընտանիքի կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով: Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի նիստում և թիվ 227 որոշմամբ բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Մոլդովական փողոցի թիվ 5 շենքի թիվ 3, երկու սենյականոց՝ 71.3 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով, 106950դրամ արժեքով, օտարել Հրանտ Սուրենի Դավթյանին, կնոջը՝ Ժենյա Մահմուդի Դավթյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 659

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Ալվարդ Անուշավանի Մարկոսյանը, իր ընտանիքի կողմից վարձակալական իրավունքով զբաղեցրած բնակարանը գնելու խնդրանքով: Հարցը քննարկվել է համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի նիստում և թիվ 224 որոշմամբ բավարարվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Մոլդովական փողոցի թիվ 5 շենքի թիվ11, երեք սենյականոց՝ 84.6 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանն ուղղակի վաճառքի ձևով, 126900դրամ արժեքով, օտարել Ալվարդ Անուշավանի Մարկոսյանին, տղային՝ Թաթուլ Էդվարդի Ֆրանգուլյանին, տղային՝ Ղազար Էդվարդի Ֆրանգուլյանին, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 660

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*15 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի 10 ամսվա գործունեության արդյունքները, անհրաժեշտություն է առաջացել վերանայել 2011թ. բյուջեի ծախսերի նախահաշիվներում որոշ հոդվածների տեղաշարժի և ֆինանսավորման ժամկետների հարցերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ.բյուջեով նախատեսված <Նախադպրոցական կրթություն> /բաժին 09 խումբ 01 դաս 01/ծախսերի նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1)«Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ ծախսերի նախահաշվից պակասեցնել

4511 հոդված – 260000 դրամ

2) )«Թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ ծախսերի նախահաշվում ավելացնել

4511 հոդված – 260000 դրամ

2. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Գ.Դավթյանին կազմել համապատասխան ծախսերի նախահաշիվների փոփոխությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 661

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*16 նոյեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի ազգային արխիվի Դիլիջանի տարածքային ներկայացուցչության կողմից տրված 2011թ. նոյեմբերի 3-ի թիվ 210 տեղեկանքի, Դիլիջանի Շամախյանի Լենինի անվան սովխոզի բանվոր-ծառայողների տնամերձային հողերի գրանցման 1962-1969-1989թթ թիվ 12 մատյանում Սամվել Սուրենի Գևորգյանի անվամբ Շամախյան թաղամասում գրանցված է 1150.0քմ տնամերձ հողամաս: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով: Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված տեղազննման և չափագրման արդյունքում նշված հողամասի փաստացի չափը կազմում է 1000.0քմ: Նշված 1000.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Սամվել Գևորգյանին հատկացված 1000.0քմ /ծածկագիր՝ 102-067/ հողամասին տալ նոր հասցե. ք. Դիլիջան, Մոլդովական փողոց թիվ 18:

2. Վերականգնել Դիլիջանի Մոլդովական փողոցի թիվ 18 հասցեի հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 1000.0քմ մակերեսով, քաղ. Սամվել Սուրենի Գևորգյանի սեփականության իրավունքով:

3. Պարտավորեցնել քաղ. Սամվել Գևորգյանին.

1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:

2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 662

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*16 նոյեմբեր 2011թ.*

**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՔԱՂ. ԱՐՏՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԻՋԵՎ 2011Թ. ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՍՈՎԵՏՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵԻ 900.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Արտուշ Գրիգորյանը՝ իր և Դիլիջանի քաղաքապետարանի միջև 2011թ. մայիսի 16-ի կնքված, Սովետների փողոցի թիվ 37/1 հասցեի 900.0քմ հողամասի վարձակալության իրավունքի թիվ ՀՎ-8 պայմանագիրը լուծելու խնդրանքով:

Հաշվի առնելով Դիլիջանի քաղաքապետարանի և քաղ. Արտուշ Գրիգորյանի միջև 2011թ. մայիսի 16-ին կնքված պայմանագրի 20.2 կետի դրույթները և ղեկավարվելով ՀՀ Հողային օրեսգրքի 48 հոդվածի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466 և 468 հոդվածների, "Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 72 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տալ համաձայնություն Դիլիջանի քաղաքապետարանի և քաղ. Արտուշ Գրիգորյանի միջև 2011թ. մայիսի 16-ին կնքված, Սովետների փողոցի թիվ 37/1 հասցեի 900.0քմ հողամասի վարձակալության իրավունքի թիվ ՀՎ-8 պայմանագրի լուծելուն:
2. Դիլջանի համայնքի ղեկավարի 2011թ. մայիսի 12-ի թիվ 312 որոշումը ճանաչել ուժը կորցրած:
3. Պարտավորեցնել քաղաքացուն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծել վերոգրյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 663

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*18 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 188Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Ջավեն Սարգսի Մեյանը՝ Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 188ա հասցեի իր սեփականությունը հանդիսացող բնակելի տանը և 845.0քմ տնամերձ հողամասին նոր հասցե տրամադրելու խնդրանքով:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 188ա հասցեի, քաղ. Ջավեն Մեյանին պատկանող բնակելի տանը և 845.0քմ տնամերձ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 188/2:
2. Պարտավորեցնել քաղ. Ջավեն Մեյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 664

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 նոյեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱՄՈ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 203 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. նոյեմբերի 16-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Կամո փողոցի թիվ 203 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Հրանուշ, Տիգրան և Գրիգոր Խաչատրյանները: Վերջիններս դիմել են Դիլիջանի քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի չափը 1350.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 538.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 238.0քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է ինքնակամ կառուցված օժանդակ շինություններ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը:

Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Կամո փողոցի թիվ 203 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 1650.0քմ: Վերջինիս վերաբերյալ առկա է համասեփականատերերի գրավոր համաձայնությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Կամո փողոցի թիվ 203 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 1650.0քմ մակերեսով, քաղաքացիներ Հրանուշ Մեսրոպի Խաչատրյանի /ծնված՝ 16.02.1937թ./, Տիգրան Կառլենի Խաչատրյանի /ծնված 19.07.1971թ./ և Գրիգոր Կառլենի Խաչատրյանի /ծնված 04.03.1956թ./ սեփականության իրավունքով:
2. Կամո փողոցի թիվ 203 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 238.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
3. Տնամերձ հողամասում առկա ինքնակամ կառուցված օժանդակ շինությունները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4. Պարտավորեցնել սեփականատերերին.
1) Իրենց տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հատատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 665

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 նոյեմբեր 2011թ.*

### ՔԱՂ. ԳՐԻԳՈՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱՄՈ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 203/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Գրիգոր Կառլենի Խաչատրյանը՝ Կամո փողոցի թիվ 203 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասին հարակից տարածքում կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Կամո փողոցի թիվ 203 հասցեի բնակելի տան տնամերձ հողամասին հարակից տարածքում կառուցվել է բնակելի տուն դեռևս 1990-ական թվականներին, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 230.0քմ հողամաս /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/, որի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղ. Գրիգոր Կաղենի Խաչատրյանի կողմից կառուցված բնակելի տանը և 230.0քմ հողամասին տրամադրել հասցե՝ Կամո փողոց թիվ 203/1:
2. Կամո փողոցի թիվ 203/1 հասցեի բնակելի տունը և 230.0քմ հողամասը համարել քաղ. Գրիգոր Կաղենի Խաչատրյանի /ծնված 04.03.1956թ./ սեփականությունը:
3. Պարտավորեցնել քաղ. Գրիգոր Խաչատրյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 666

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 նոյեմբեր 2011թ.*

### ՄԱՐԻԵՏԱ ԽԱԼԱԹՅԱՆԻՆ ԻՐ ԹՈՌԱՆ՝ ԳԱԳԻԿ ԱՐՏՈՒՇԻ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Դիլիջան քաղաքիԿալինինի 216ա հասցեի բնակիչ Մարիետա Խալաթյանը 1999թ. հուլիսի16-ին ծնված Գագիկ Արտուշի Մարկոսյանի նկատմամբ խնամակալ նշանակելու խնդրանքով: Ուսումնասիրությունից պարզվել է, որ Դիլիջանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վճռով երեխայի խնամքը հանձնվել է հորը, որը բացակայում է հանրապետությունից և երեխայի խնամքն ամբողջովին իրականացնում է իր հարազատ տատը՝ Մարիետա Խալաթյանը:
Հաշվի առնելով, որ Մարիետա Խալաթյանը չափահաս գործունակ է, ծնողական իրավունքներից զրկված չէ, բարոյական և անձնական այլ հատկանիշները բնութագրվում են դրական և նա հանդիսանում է Գագիկ Արտուշի Մարկոսյանի հարազատ տատը, իսկ անչափահասը խնամքի կարիք ունի՝ Դիլիջան համայնքի խնամակալության, հոգաբարձության հանձնաժողովը տվել է իր դրական եզրակացությունը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 33, 34, 36, 37հոդվածների, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134,135 հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Դիլիջան քաղաքի Կալինինի 216ա հասցեի բնակիչ Մարիետա Խալաթյանին նշանակել իր թոռան՝ 1999թ. հուլիսի 16-ին ծնված Գագիկ Արտուշի Մարկոսյանի նկատմամբ խնամակալ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 667

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 նոյեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ԳԱՐՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ, ԴԻԼԻՋԱՆԻ ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 02.11.2011թ. տրված թիվ 2845545 սեփականության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Տիգրան Պետրոսյան փողոցի թիվ 25 հասցեի 1000.0քմ տնամերձ հողամասը պատկանում է քաղ. Գարուշ Բախտիբեկի Հակոբյանին: Նշված հողամասում առկա է ինքնակամ կառուցված բնակելի տուն և պարիսպ: Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Գարուշ Հակոբյանը՝ նշված ինքնակամ շինություններն օրինականացնելու խնդրանքով: Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովի կողմից կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված է բնակելի տուն՝ 82.5քմ մակերեսով և պարիսպ՝ 37.9քմ մակերեսով:
Հանձնաժողովը նշում է, որ նշված ինքնակամ շինությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով սահմանված օրինականացման պայմաններին, չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված են առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, վերոգրյալ ինքնակամ շինությունների օրինականացման վերաբերյալ: Վերոգրյալ ինքնակամ կառուցված 82.5քմ մակերեսով բնակելի տան օրինականացման համար օրենքով նախատեսված վճարի չափը կազմում է 107250 դրամ, 37.9քմ մակերեսով պարիսպի օրինականացման համար օրենքով նախատեսված վճարի չափը կազմում է 49270 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման II հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Տիգրան Պետրոսյան փողոցի թիվ 25 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 82.5քմ մակերեսով բնակելի տունը և 37.9քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական /կցվում է գլխավոր հատակագիծը/:
2. Պարտավորեցնել քաղ. Գարուշ Հակոբյանին.
1) սույն որոշումը կայացնելու պահից 60 օրյա ժամկետում /չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած/ քաղաքապետարանի 900405051690 հաշվարկային հաշվին մուծել վերոգրյալ ինքնակամ կառուցված բնակելի տան և պարիսպի օրինականացման դիմաց գանձվող օրենքով սահմանված վճարը, այն է՝ 156520 դրամ /107250 դրամ և 49270դրամ/, վերջինիս վճարման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2010թ. հոկտեմբերի 15-ի թիվ 200-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 668

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 նոյեմբեր 2011թ.*

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2001թ ՄԱՐՏԻ 6-Ի ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Դիլիջան քաղաքի Գայի փողոցի 33շենքի թիվ 10 բնակարանի բնակիչ Արմինե Համբարձումյանը խնդրելով Դիլիջանի քաղաքապետի 2001թ. մարտի 6-ի որոշման մեջ կատարել փոփոխություն:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ Դիլիջանի քաղաքապետի 2001թ.մարտի 6-ի «Դիլիջանի քաղաքապետի 1997թ. Հուլիսի 29–ի թիվ 262 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 20 որոշման մեջ սխալ է տեղի ունեցել՝ «Սերյոժա Ժորայի Համբարձումյանի» փոխարեն գրվել է «Սերգեյ Ժորայի Համբարձումյան», «Արմինե Սերյոժայի Համբարձումյանի» փոխարեն «Արմինե Սերգեյի Համբարձումյան» և «Էլյա Սերյոժայի Համբարձումյանի» փոխարեն գրվել է «Էլեն Սերգեյի Համբարձումյան»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքապետի 2001թ. մարտի 6-ի՝ «Դիլիջանի քաղաքապետի 1997թ. Հուլիսի 29–ի թիվ 262 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 20 որոշման մեջ կատարել փոփոխություն՝«Սերգեյ Ժորայի Համբարձումյանի» փոխարեն կարդալ «Սերյոժա Ժորայի Համբարձումյան»,«Արմինե Սերգեյի Համբարձումյանի »փողարեն «Արմինե Սերյոժայի Համբարձումյան» և «Էլեն Սերգեյի Համբարձումյանի» փոխարեն՝«Էլյա Սերյոժայի Համբարձումյան»:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 669

ՀՀ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*21 նոյեմբեր 2011թ.*

## ԱՐՄԻՆԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայողների ատեստավորման հանձնաժողովի 2011թ. նոյեմբերի 17-ի թիվ 2 որոշումը և ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժնի պետ Արմինե Սանթրոսյանին (պաշտոնի անձնագրի ծածկագիր 1.3-1) շնորհել Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 670

*ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,*
*Ֆաքս (+374 268) 2-33-62*

*22 նոյեմբեր 2011թ.*

### ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԻՎԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. նոյեմբերի 21-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Իվանովի փողոցի թիվ 18 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկտմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղաքացի Արթուր Կառլենի Բաղմանյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով: Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի մակերեսը կազմում է 1010.0քմ: Կատարված տեղազննման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 1009.0քմ: Չափի փոփոխման հարցում սեփականատերը առարկություն չունի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է ինքնակամ կառուցված օժանդակ շինություն և բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Իվանովի փողոցի թիվ 18 հասցեի 1009.0քմ տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ քաղ. Արթուր Բաղմանյանի սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը և բնակելի տան ինքնակամ կցակառուցումները, համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել քաղ. Ա. Բաղմանյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 671

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*22 նոյեմբեր 2011թ.*

# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 245-051 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 245-051 ծածկագրով 67.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 245-051 ծածկագրով, 67.5քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Գայի փողոց թիվ 41:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 245-051 ծածկագրով 67.5քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 672

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*22 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 686-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 686-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 600.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը և տալ նոր ծածկագիր՝ 686-003: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի գլխավոր հատակագծի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում, մասնավորապես՝ այլ հողեր /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 686-003 ծածկագրով, 600.0քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Առողջարանային փողոց թիվ 1/2:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 686-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 686-003 նոր ծածկագրով, 600.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 673

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*22 նոյեմբեր 2011թ.*

## ՔԱՂ. ՄԿՐՏԻՉ ԱԼԻԽԱՆՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 20/5 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Մկրտիչ Աշոտի Ալիխանյանը՝ Կալինինի փողոց 2-րդ նրբ. թիվ 20 հասցեին հարակից տարածքում իր կողմից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Կալինինի փողոց 2-րդ նրբ. թիվ 20 հասցեին հարակից տարածքում քաղ. Մկրտիչ Ալիխանյանի կողմից կառուցվել է բնակելի տուն դեռևս 1990-ական թվականներին /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 3182.0քմ հողամաս, որից 400.0քմ-ի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով, մնացած 2782.0քմ հողամասը համայնքային սեփականություն է /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Մկրտիչ Ալիխանյանի կողմից, Կալինինի փողոց 2-րդ նրբ. թիվ 20 հասցեին հարակից տարածքում կառուցված բնակելի տանը և 400.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կալինինի փողոց 2-րդ նրբ. թիվ 20/5:
2. Կալինինի փողոց 2-րդ նրբ. թիվ 20/5 հասցեի բնակելի տունը և 400.0քմ հողամասը համարել քաղ. Մկրտիչ Աշոտի Ալիխանյանի /ծնված 21.07.1962թ./ սեփականությունը:
3. Վերը նշված 2782.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հողեր», մասնավորապես՝ բնակելի կառուցապատման:
4. Պարտավորեցնել քաղ. Մկրտիչ Ալիխանյանին.
1) Նշված տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 674

---

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*23 նոյեմբեր 2011թ.*

### ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 60Ա ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 31.0ՔՄ /ՄԻՆՉԵՎ 20%/ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԳԱՅԱՆԵ ՍԱՀԱԲԱԼՅԱՆԻ ԵՎ ԱՐՄԵՆ ՔԵՌՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2009թ. հոկտեմբերի 6-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և 2009թ. հոկտեմբերի 6-ի սեփականության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Գայի փողոցի թիվ 60ա հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Գայանե Սահաբալյանը և Արմեն Քեռյանը: Վերջիններս դիմել են Դիլիջանի քաղաքապետին՝ նշված տնամերձ հողամասի օրինական սահմանների ճշտման խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, Գայի փողոցի թիվ 60ա հասցեի տնամերձ հողամասի մակերեսը կազմում է 400.0քմ: Կատարված տեղազննման և քարտեզագրման արդյունքում պարզվել է, որ նշված տնամերձ հողամասին կից տնատիրության կողմից փաստացի ավել օգտագործվում է 31.0քմ հողամաս, որի նկատմամբ ճանաչվում է քաղաքացիների սեփականության իրավունքը (400.0քմ X մինչև 20%) /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Վերջինիս տվյալները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի 1), 2), 3) ենթակետերի պահանջներին: Նշված տնամերձ հողամասում առկա են ինքնակամ կառուցված օժանդակ շինություններ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թվականը /առկա է

թաղային կոմիտեի տեղեկանքը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75 հոդվածի պահանջներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2009թ. հոկտեմբերի 12-ի «Դիլիջան քաղաքի Գայի փողոցի թիվ 60ա հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող հողամասը քաղաքապետարանի տնօրինության տակ վերցնելու մասին» թիվ 613 որոշումը չեղյալ ճանաչել:
2. Դիլիջան համայնքում իրականացվող առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Գայի 60ա հասցեի 31.0քմ հողամասի նկատմամբ ճանաչել քաղաքացիներ Գայանե Սահաքյանի և Արմեն Քեռյանի սեփականության իրավունքը: Այսպիսով, Գայի փողոցի թիվ 60ա հասցեի տնամերձ հողամասի չափը կազմում է 431.0քմ /400.0քմ+31.0քմ/մինչև 20%/:
3. Տնամերձ հողամասում առկա ինքնակամ կառուցված օժանդակ շինությունները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
4. Պարտավորեցնել սեփականատերերին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 675

ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55, Հեռ. (+374 268) 2-25-85,
Ֆաքս (+374 268) 2-33-62

*24 նոյեմբեր 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆԻ ՎԱՍԻԼԵՎ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. նոյեմբերի 10-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Վասիլև փողոցի թիվ 20 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Հրանուշ Արամայիսի Դավթյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի չափը 719.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 294.0քմ հողամաս, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Նշված 294.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Վասիլև փողոցի թիվ 20 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 1013.0քմ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Վերականգնել Դիլիջանի Վասիլև փողոցի թիվ 20 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 1013.0քմ մակերեսով, քաղ. Հրանուշ Արամայիսի Դավթյանի /ծնված՝ 19.11.1963թ./ սեփականության իրավունքով:
2. Պարտավորեցնել Հրանուշ Դավթյանին.
1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. մարտի 30-ի թիվ 55-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ